



Promise Health Plan

#### Բաժին 4- Նպաստներն ու ծառայությունները

## «Blue Shield of California Promise Health Plan» ծրագրում ընդգրկված «Medi-Cal» - ի նպաստները

### «Provisional Postpartum Care Extension Program» ծրագիրը

«Provisional Postpartum Care Extension Program» (PPCE) ծրագիրը նախատեսում է երկարացված ժամկետով ապահովագրություն «Medi-Cal» - ի այն անդամների համար, ովքեր հղիության ընթացքում կամ հղիությունից հետո ընկած ժամանակահատվածում ունեն ծննդաբերությամբ պայմանավորված հոգեկան առողջության հետ կապված խնդիր:

«Blue Shield of California Promise Health Plan» - ը ապահովագրում է ծննդաբերությամբ պայմանավորված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանանց խնամքը հղիության ընթացքում և հղիության ավարտից հետո երկու ամսվա ընթացքում: PPCE ծրագիրը երկարացնում է այդ ապահովագրությունը ախտորոշումից կամ հղիության ավարտից հետո մինչև 12 ամսով՝ կախված նրանից, թե դրանցից որն ավելի ուշ տեղի կունենա:

PPCE ծրագրին համապատասխանելու համար ձեր բժիշկը պետք է հաստատի՝ ծննդաբերությամբ պայմանավորված հոգեկան առողջության ձեզ մոտ առկա խնդրի ախտորոշումը հղիության ավարտից հետո 150 օրվա ընթացքում: Հարցրեք ձեր բժիշկին այս ծառայությունների մասին, եթե կարծում եք, որ դրանց կարիքն ունեք: Եթե ձեր բժիշկը գա այն եզրակացության, որ դուք ունեք PPCE ծառայության կարիքը, ձեր բժիշկը կլրացնի և ձեզ կներկայացնի համապատասխան ձևաթղթերը:



Չանգահարեք «Blue Shield Promise Member Services» (855) 699-5577  
(հեռախոյա՝ 711) հեռախոսահամարով առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան  
6:00: Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք California Relay Line 711 համարով: Այցելեք «Blue Shield  
Promise» կայքը հետևյալ հղումով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://blueshieldca.com/promise/medi-cal).